ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«12» մայիսի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 23 (քսաներեք) անդամներ՝
Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Հունանյանը, Ա.Գրիգորյանը, Տ.Փանոսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Վարդանյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 234-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար NN 1,2,3 հավելվածների:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հավանություն տալ Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն Գյումրի համայնքի 2020թվականի բյուջեից կատարված 5 280 000 (հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ծախսին:
2. Թույլատրել իրականացնել անհետաձգելի համարվող գնումը մեկ անձի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու:
3. Գյումրի համայնքի բժշկական կազմակերպությունների Գյումրի համայնքում բնակվող բուժանձնակազմի տեղաշարժը արտակարգ դրության պայմաններում տրանսպորտային միջոցներով ապահովող կազմակերպություններին կատարել համապատասխան ֆինանսական միջոցների հատկացում՝ ներկայացրած հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա:
4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒՑ ԲԽՈՂ ՏՈՒՅԺԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Պայմանագրերում ամրագրված պարտավորությունների կատարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում սահմանել տույժ՝ 0.04%-ի չափով՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված տույժը կիրառվում է պայմանագրերում ամրագրված պարտավորությունների կատարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում՝ ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, բյուջեի եկամուտների հավաքագրման, գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժինների պետերին՝ ապահովել վարձակալների հետ կնքված պայմանագրերի համապատասխան կետերի փոփոխությունների վերաբերյալ երկկողմանի համաձայնագրերի կնքման գործընթացի և տվյալների շտեմարանների վարման ծրագրերում նշված փոփոխությունների իրականացումը:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված փոփոխությունների հաշվարկը սկսել 2020 թվականի հունվարի 01-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

Համայնքի ավագանու անդամ Արման Գրիգորյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 4-րդ հարցից:

ԼՍԵՑԻՆ.

5. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 92 (ԻՆՆՍՈՒՆԵՐԿՈՒ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 92 (իննսուներկու) անձանց կանխիկ հատկացնել 960 000 (ինը հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ԿԱՐԻՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Կարինե Ներսիսյանին հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴ ԲԱՂ 1-ԻՆ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վարդ Բաղ 1-ին միկրոշրջանի 3-րդ շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար հատկացնել 2 507 000 (երկու միլիոն հինգ հարյուր յոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինսատնտե-սագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 6/6/1 գործառնական դասակարգման (4251) «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 13/50 ՀԱՍՑԵԻ 120,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՔՐԴՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 13/7 ՀԱՍՑԵԻ 120,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Շիրակացու փողոց N 13/50 հասցեի 120,0 (մեկ հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասը քացաքացի Արմեն Քրդոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց N 13/7 հասցեի 120,0 (մեկ հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակության միջոցով օտարելուն:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի փոխանակության մասին պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 24-րդ կետի համաձայն հաստատված օրակարգի 10-րդ և 11-րդ հարցերը մինչև դրանց քվեարկությունը հեղինակի առաջարկով հանվել են օրակարգից:

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 2/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Գյումրի համայնքի ավագանու անդամ Վահան Հունանյանը շմասնակցեց քվեարկությանը օրակարգի 10-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում կառուցվող ավտոտրանսպորտային միջոցների միասնական սպասարկման կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հարակից տարածքներում և փողոցներում սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու նպատակով Գյումրի համայնքի ավագանու կողմից սահմանված շինարարության թույլտվություն ձեռք բերելու ժամանակ գանձվող տեղական վճարի նկատմամբ կիրառել արտոնություն՝ կենտրոնի կառուցման նախահաշվարկային արժեքից հաշվարկված 5 126 000 (հինգ միլիոն հարյուր քսանվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վճարի վճարումից ազատման միջոցով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

(Զեկուցող՝ Ս.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 202-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ա որոշման 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու խնդրանքով՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը համայնքային ծառայողների մասով ուժի մեջ է մտնում Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ընդունվելիք իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, իսկ հայեցողական պաշտոնի մասով՝ որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի №56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ա.ՇԱԲՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, ամրացվող գույքի կազմը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածությանը համաձայնություն տալու մասին» №56-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) որոշման 4-րդ կետով հաստատված հավելված №3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 35-Ա ԵՎ N 37-Ա ՈՐՈՇՄՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 3-րդ փողոց N 4/1 հասցեում ինքնակամ կառուցված աստիճանները և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը վարձակալության տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին» N 35-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) որոշման նախաբանում «34-րդ կետի 2-րդ մասի» թվերը և բառերը փոխարինել «34.2-րդ կետի» թվով և բառով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» N 37-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) որոշման 2-րդ կետում «ստորագրման պահից» բառերը փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ ավագանու «ԳԱԼԱ» խմբակցության անդամ՝ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ ավագանու «ԳԱԼԱ» խմբակցության անդամ՝ Զեկուցող՝ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդին՝ ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի գումարման օր սահմանել 2020 թվականի հունիսի 10-ը:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա.Վարդանյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան_____

Հ. Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

քաղաք Գյումրի
«12» մայիսի 2020 թվական